



Մ ՈՒՐՐ Զ ԱԿՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ

Վարդապատի Երպրոտի Կիրակի 23 ՅՈՒՆԻՍ 2023

Կիրակնօրեայ Ընթերցումներ էջ 1
Ծանուցումներ էջ 2

ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ (3.16-4.1)

Այսպէս կ'ըսէ Տէրը. «Քանի որ Սիրոնի աղջիկները հպարտացան, բարձրավիզ կը քալեն, ցանկալից ակնարկներ կը նետեն, մանրաքայլ կը շարժին եւ ոստոստուն կը քալեն, որպէս պատիժ՝ պիտի նուաստացնեմ Սիրոնի իշխանուհիները եւ զիրենք պիտի մերկացնեմ իրենց զարդերէն»:

Այն օրը Տէրը պիտի հանէ անոնց փառաւոր զգեստները եւ ոտքերուն մեհեւանդները, մազի հիւսքերը, գլխազարդ ծամակներն ու պսակակալները եւ վզի մահիկները, ճակատի գինդերը, օղերը, ապարանջաններն ու շղարշէ շալերը, ապարօշները, քօղէքներն ու մետաքսէ գօտիները, անուշահոտերու տուփերը, յուռութքները, մատանիներն ու քթամանեակները, դիպակէ պատմուճանները, վերարկուները, հայելիները, բեհեզէ զգեստները, խոյրերն ու քօղերը: Իրենց հպարտանքին փոխարէն՝

անուշահոտութեան տեղ գարշահոտութիւն պիտի ունենան, մէջքի կամարներուն տեղ՝ չուանէ գօտի, գեղեցկահիւս մազերուն տեղ՝ կնտութիւն, ոսկեհիւս դիպակներուն տեղ՝ քուրճ պիտի հագնին եւ գեղեցկութեան տեղ ամօթ պիտի ունենան: Անոնց սիրելի եւ գեղեցիկ զաւակները սուրով պիտի իյնան, անոնց կտրիճները պատերազմի մէջ պիտի սպաննուին:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ (1.25-30)

Աստուծոյ տնօրինութիւնը, որ յոյներ յիմարութիւն կ'որակեն, իմաստնագոյն է քան մարդկային որեւէ իմաստութիւն. եւ Աստուծոյ խաչը, որ հրեաներ տկարութիւն կը համարեն, աւելի զօրեղ է քան մարդկային ամէն զօրութիւն:

Եղբայրներ, դուք ձեզմէ դատեցէք. ի՛նչ էիք երբ Աստուած ձեզ կանչեց: Ձեզմէ քանի՞ն իմաստուն, հզօր կամ ազնուատոհմ էր մարդկային չափանիշներով: Բայց Աստուած դիտմամբ ընտրեց այն ինչ որ այս աշխարհը յիմար եւ անիմաստ կը գտնէ, անով իմաստունները ամօթով ձգելու համար. ընտրեց այն ինչ որ այս աշխարհը տկար

կը համարէ, անով հզօրները ամչցնելու համար. եւ ընտրեց այն ինչ որ այս աշխարհը անարժէք, արհամարհելի եւ ոչնչութիւն կը համարէ, անով ոչնչացնելու համար այս աշխարհի մեծութիւնները: Եւ ասիկա՝ որպէսզի ոեւէ մարդ չպարծենայ Աստուծոյ առջեւ, որովհետեւ Աստուած ի՛նքն է որ ձեզ բերաւ Քրիստոսի միացուց, եւ մենք Քրիստոսով ճանչցանք Աստուծոյ իմաստութիւնը եւ գտանք մեր արդարութիւնը, սրբութիւնը եւ փրկութիւնը:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ
(18.10-14)

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.-

«Զգո՛յշ, մի՛ արհամարհէք այս փոքրիկներէն ոեւէ մէկը. գիտցէք որ անոնց հրեշտակները երկինքի մէջ միշտ կը տեսնեն իմ երկնաւոր Հայրս: Որովհետեւ մարդու Որդին եկաւ կորսուածը փրկելու համար»:

«Ի՞նչ կը կարծէք. եթէ մարդ մը հարիւր ոչխարներէն մէկը կորսնցնէ, չի՞ ձգեր իննսուկները ոչխարները լերան վրայ եւ չ'երթա՞ր փնտռելու կորսուած ոչխարը: Այո՛, կ'երթայ: Եւ եթէ պատահի որ գտնէ, վստահ եղէք որ աւելի կ'ուրախանայ այդ ոչխարին համար, քան թէ իննսուկները ոչխարներուն համար որոնք կորսուած չեն: Նմանապէս ալ Հայրս, որ երկինքի մէջ է, չ'ուզեր որ այս փոքրիկներէն մէկը կորսուի»:

ԱՅԾԵԼԵԾԷ՛Ք
ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԴԻԱՍՏԵՏՐԻ ԷՁՈ

ԵՒ
ՁԵՐ ՀԱԽԱՆՈՒԹԻՒՆ
յԱՅՏԵԾԷ՛Ք (like).

[www.facebook.com/
SourpHagopChurch-
Montreal](http://www.facebook.com/SourpHagopChurch-Montreal)

ԱՅԾԵԼԵԾԷ՛Ք ԱՎԵՒ
Ս. ՅԱԿՈԲ
ԱՌԱՋԱՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԿԱՅԲԷՁՈ՛Ն՝
www.sourphagop.net

ԹԵՐԹԻԿԻ ԱՆՈՐԴ ԹԻԲԵՐՈ
ԿՐԱՔ ՊՏԱԵԼ
www.sourphagop.net
ԿԱՅԲԷՁԻՆ ԿՐԱՅ

ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ
ՁԵՐ ԱՌՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԵՐՈ
ԱՆՈՐՕՐԸ ԿԱՏԱՐԵԾԷ՛Ք ԿԱՊՈՒԵԼՈՎ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳՐԱՍԵՆԵԱԿ: